

ՀՀ արդյունաբերողների եւ գործարարների միությունում Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի զեկույցը՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի մեկնաբանությամբ

Պետք է խթանվի գիտության առևտրայնացումը

ՀՀ արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միությունում երեկ գործատուների եւ գիտնականների հետ համատեղ խորհրդակցություն էր ծավալվել գիտության առևտրայնացման, գիտության բնագավառում առկա խնդիրների եւ այս ուղղությամբ ՀՀ կառավարության որդեգրած ռազմավարության վերաբերյալ: ՀԱԳ(զ)Մ նախագահ Արսեն Ղազարյանը ներկաներին տեղեկացրեց, որ կառավարությունը քննարկմանն է դրել գիտություն—արտադրություն, գիտություն եւ տնտեսություն համագործակցության հիմնադրույթները: Նա հիշեցրեց, որ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նույնպես կողմնակից է այն տեսակետին, որ թե՛ կառավարությունը, թե՛ բիզնես հանրությունը պետք է գտնեն գիտությունն ու տնտեսությունը միմյանց կապելու նոր ուղիներ: ՀԱԳ(զ)Մ նախագահ Արսեն Ղազարյանը նկատեց, որ թեեւ տարիներ շարունակ քննարկվում է այս խնդիրը, սակայն իրավիճակը դեռեւս անփոփոխ է: Բացակայում են գիտության առևտրայնացում հասկացությունը եւ իրատեսական պահանջմունքի ձևավորումը, որը դրվի գիտության առջեւ եւ ապահովի հետադարձ կապ: Այս գործընթացը, միության նախագահի համոզմամբ, հարիր է մեր ինտելեկտուալ գիտական մակարդակին եւ ներկայիս զարգացող ու ձևավորվող գործարարությանը: Այս խորհրդակցությունը գործընթացի իրականացման փուլերից մեկն է, որը թույլ կտա քննարկումների միջոցով հանգել այն ճշմարտությանը, որ մեր երկրում գիտությունը զարգացնելու մեծ հեռանկարներ կան: Գործարարների համոզմամբ, համատեղ քննարկումները կնպաստեն նաեւ, որպեսզի ներկայիս միջազգային ճգնաժամի եւ լճացման պայմաններում Հայաստանը կարողանա առավել հզորությամբ դիմադրել եւ դրսևորել իրեն որպես գիտատար տնտեսություն: ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն իր զեկույցում անդրադարձավ ՀՀ կառավարության որդեգրած ռազմավարությանը գիտության բնագավառում եւ խոսեց գիտության առևտրայնացման հիմնախնդիրների եւ գիտության կոմիտեի ստեղծման նպատակների մասին: Որպեսզի ապագայի նկատմամբ որոշակի լուծումներ ուրվագծվեն, բանախոսը առաջարկեց նախ ամփոփել այն ամենը, ինչն առկա է ոլորտում: «Վերջին 3—4 ամիսների ընթացքում մենք անցկացրեցինք գիտական հիմնարկների անձնագրավորում, որի արդյունքում պարզ դարձավ, թե հետխորհրդային շրջանից հետո ի՞նչ է մեզ մնացել: Խորհրդային ժամանակներում ունեցած մեր գիտական հիմնարկների թիվը գրեթե չի պակասել, նույնիսկ ավելացել է: Այսօր պետական բյուջեից ֆինանսավորվող հիմնարկների թիվը հասնում է 130—ի, որի մեջ ներառված են բուհերը, հետազոտական կենտրոնները, ակադեմիական ինստիտուտները եւ այլն: Ի՞նչ է արվել այս տարիների ընթացքում, ցավոք, լուրջ քայլեր չեն արվել, որպեսզի այն, ինչ մնացել է, օպտիմալ կերպով օգտագործվեն եւ նպաստեն մեր պետության զարգացմանը»,—նշեց Սամվել Հարությունյանը: Նրա հայտնած տվյալներով, գիտության ոլորտին տրամադրվող բյուջեն տարեցտարի ավելանում է. 2008—ին այն կազմում էր 6, 8 մլրդ դրամ, իսկ 2009—ի համար հատկացվելու է 8, 3 մլրդ դրամ: Ներկայումս գիտության համակարգում ընդգրկված է 36 գիտահետազոտական ինստիտուտ եւ կենտրոն: Բյուջեի մոտ 46 տոկոսը հատկացվում է ակադեմիական հիմնարկներին, մոտ 15 տոկոսը բուհերին, իսկ մնացածը՝ ճյուղային ինստիտուտներին: Սամվել Հարությունյանը գոհ չէ ֆինանսավորման մեխանիզմից եւ կարծում է, որ ծավալները բավարար չեն եւ ճիշտ ձևով չեն բաշխվում: «Սովորաբար, պետք է ֆինանսավորվեն ծրագրերը, այլ ոչ գիտնականները»,—ասում է նա: Ֆինանսավորման ծավալները մեծացնելու համար, կոմիտեի նախագահի տեղեկացմամբ, իրատեսական ծրագրեր են անհրաժեշտ, որոնց ուղղությամբ պետությունը պետք է գումարներ հատկացնի: «Իմ կարծիքով՝ գիտությունը այսօր ծանր վիճակում է, սակայն ոչ ողբալի: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Հայաստանում դեռեւս առկա է գիտական լուրջ պոտենցիալ»,—հավաստիացրեց բանախոսը, հայտնելով տվյալներ այն մասին, որ

հանրապետությունում տարեկան հրատարակվում է մոտ 4 հազար գիտական աշխատանք, որոնցից 1000—1200—ը տպագրվում են միջազգային հեղինակավոր ամսագրերում: Բացի այդ, Հայաստանը իր դրամաշնորհային ծրագրերով բավականին առաջնային դիրք է զբաղեցնում հետխորհրդային տարածքում, եւ մեր երկրում տարեկան շուրջ 7 մլն դոլարի դրամաշնորհային ծրագրեր են իրականացվում: Որպես ոլորտին անհանգստացնող հինախնդիր, գիտության կոմիտեի նախագահը դիտարկում է ոչ բարվոք նյութատեխնիկական բազան, նշելով, որ ինստիտուտների գերակշռող մասում սարքավորումները ունեն 25—30 տարվա վաղեմություն, որոնց վրա դժվար է ստանալ լավագույն հետազոտական եւ փորձագիտական արդյունքներ: Նա ընդգծեց նաեւ, որ բնական գիտությունների ասպարեզում, որն առնչվում է տնտեսության արդյունաբերության հետ, աշխատանքների գերակշռող մեծամասնությունը տեսական աշխատանքներ են, եւ փորձարարական աշխատանքների տեսակարար կշիռը բավական ցածր է:

Գիտության կոմիտեի նախագահի տեղեկացմամբ, իրենց ապագա գործունեության մեջ համակարգային մի շարք բարեփոխումների հետ մեկտեղ լուրջ ուշադրություն է դարձվելու նաեւ գիտական արդյունքների առևտրայնացման խնդրին: «Այստեղ հեծանիվ պետք չէ հայտնաբերել, կան աշխարհում կիրառվող տարբեր մեթոդներ: Ես կարծում եմ, որ նման մեխանիզմները պետք է տեղայնացնել եւ կիրառել նաեւ մեր երկրում: Դրա համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսները այսօր, բարեբախտաբար, դեռ ունենք: Ճիշտ է՝ մենք մեծ կորուստներ ենք կրել: Եթե խորհրդային շրջանում ՀՀ-ում գրանցված էր ավելի քան 25 հազար գիտնական, ապա այսօր այդ թիվը կազմում է մոտ 7, 5 հազար: Կորուստ ենք ունեցել միջին սերնդի առումով, 25—42 տարեկան գիտնականների շրջանում»,—նշեց Սամվել Հարությունյանը, հայտնելով նաեւ այն մասին, որ իրենց ապագա ծրագրերում նախատեսվում է գիտության զարգացման ռազմավարության ընդունումը մոտակա 10 տարիների համար: Նրա տեղեկացմամբ, հավանաբար այն կընդունվի 2009—ի մարտ-ապրիլ ամիսներին: Նախատեսվում է նաեւ փոփոխություններ կատարել գիտության մասին օրենքում, որը, ըստ բանախոսի, համահունչ չէ այս ժամանակաշրջանին: Կեստակեցվեն նաեւ գիտության գերակայությունները, որոնք կբխեն պետության անվտանգության խնդիրներից եւ տնտեսական զարգացման հիմնական ուղղություններից: Խորհրդակցության ժամանակ փոխանակվեցին նաեւ կարծիքներ: Երկշաբաթյա ժամանակահատվածում ՀԱԳ(Գ)Մ—ն ՀՀ վարչապետին է ներկայացնելու տեսակետների եւ առաջարկված ծրագրերի փաթեթը:

